

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2018թ. մայիսի 14-ի նիստի
Գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 51 -ը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ընտրություններ:
2. Գիտական կոչումների շնորհում:
3. Համալսարանում գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացի մասին:
Ձեկ. Սրբուհի Գևորգյան
4. Տեղեկատվական տեխնոլոգիաները համալսարանում:
Ձեկ. Արա Երեմյան
5. Ընթացիկ հարցեր:

Գիտական խորհրդի նախագահ Ռուբեն Միրզախանյանը ներկաներին առաջարկեց հաստատել նիստի օրակարգը, եթե նրանք այլ առաջարկություններ չունեն:

Գիտական խորհրդի անդամները միաձայն հաստատեցին օրակարգը:

Ծննդյան հոբելյանի առթիվ պարոն Միրզախանյանը շնորհավորեց համալսարանի երկու դասախոսների և նրանց շնորհեց դրամական պարգև:

Լսեցին – Հումանիտար մասնագիտությունների գծով հանձնաժողովի նախագահ Աելիտա Դոլուխանյանի հաղորդումը Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչի ընտրության մասին:

Տիկին Դոլուխանյանը ներկայացրեց Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի թեկնածու, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Գրիգորյանի գիտամանկավարժական գործունեությունը: Տիկին Դոլուխանյանն ասաց, որ հումանիտար մասնագիտությունների գծով հանձնաժողովը որոշում է կայացրել գիտական խորհրդին ներկայացնել Ստեփան

Գրիգորյանի թեկնածությունը՝ Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրությանը մասնակցելու համար:

Որոշեցին – Ստեփան Գրիգորյանի թեկնածությունները դնել փակ գաղտնի քվեարկության:

Լսեցին – Գիտական և ուսումնամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը համալսարանի ութ դասախոսների դոցենտի գիտական կոչումներ շնորհելու մասին:(Կից՝ տես ցուցակը):

Որոշեցին – Համալսարանի դասախոսներ Արա Գևորգյանի, Սուսաննա Բաղդասարյանի, Աստղիկ Բալայանի, Հովիկ Հովհաննիսյանի, Կարինե Միրզոյանի, Դավիթ Պողոսյանի, Լուսինե սողոմոնյանի և Արմինե Վահանյանի թեկնածությունները դնել գաղտնի քվեարկության:

Լսեցին – Ձայներ հաշվող հանձնաժողովի ընտրության մասին:

Որոշեցին – Ստեղծել ձայներ հաշվող հանձնաժողով հետևյալ կազմով.

1. Լալիկ Խաչատրյան- նախագահ
2. Միրանուշ Կարապետյան
3. Ռուզաննա Սաղոյան
4. Լիլիթ Հարությունյան
5. Արփինե Կարապետյան

Լսեցին – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Լալիկ Խաչատրյանի հաղորդումը Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչի ընտրության քվեարկության արդյունքների մասին:

Քվեարկության արդյունքներն են.

Ստեփան Գրիգորյան (Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչի պաշտոնի համար) - 52 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

1. Որոշեցին –

Համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտիտրիդի 62 անդամներից նիստին ներկա էին 51-ը, 49 կողմ, 2 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Վաղինակի Գրիգորյանին համարել

ընտրված Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

Լսեցին – Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Լավիկ Խաչատրյանի հաղորդումը գիտական կոչումների շնորհման քվեարկության արդյունքների մասին:

Արա Գևորգյան (դոցենտի կոչման համար) – 50 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Բաղդասարյան Սուսաննա (դոցենտի կոչման համար) – 48 կողմ, 3 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Բալայան Աստղիկ (դոցենտի կոչման համար) – 47 կողմ, 3 դեմ, 1 անվավեր քվեաթերթ

Հովհաննիսյան Հովիկ(դոցենտի կոչման համար) – 49 կողմ,2 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Միրզոյան Կարինե(դոցենտի կոչման համար) – 50 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Պողոսյան Դավիթ(դոցենտի կոչման համար) – 49 կողմ, 2 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Սողոմոնյան Լուսինե (դոցենտի կոչման համար) – 50 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ

Վահանյան Արմինե(դոցենտի կոչման համար) – 48 կողմ, 1 դեմ, 2 անվավեր քվեաթերթ

2. Որոշեցին –

Համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտիտրիքի 62 անդամներից նիստին ներկա էին 51-ը, 50 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Երաժշտության ամբիոնի վարիչ, ՀՀ վաստակավոր արտիստ Արա Կարլենի Գևորգյանին <<Երաժշտական արվեստ>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(դ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտիտրիքի 62 անդամներից նիստին ներկա էին 51-ը, 48 կողմ, 3 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Սուսաննա Խուրշուդի Բաղդասարյանին <<Մանկավարժություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտիտրիքի 62 անդամներից նիստին ներկա էին 51 -ը,

47 կողմ, 3 դեմ, 1 անվավեր քվեաթերթ/ Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Աստղիկ Ժորայի Բալայանին <<Մանկավարժություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 51-ը, 50 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Ռուսաց լեզվի ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Կարինե Թևուշի Միրզոյանին <<Մանկավարժություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 51-ը, 49 կողմ, 2 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Թանգարանագիտության, գրադարանագիտության և մատենագիտության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Դավիթ Ալբերտի Պողոսյանին <<Մանկավարժություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 51-ը, 50 կողմ, 1 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու Լուսինե Լևոնի Սողոմոնյանին <<Մանկավարժություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 51-ը, 48 կողմ, 1 դեմ, 2 անվավեր քվեաթերթ/ Ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու Արմինե Գրիգորի Վահանյանին <<Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն>> մասնագիտության գծով շնորհել դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(բ) կետի, համաձայն գաղտնի քվեարկության արդյունքների /գիտխորհրդի 62 անդամներից նիստին ներկա էին 51 - ը, 49 կողմ, 2 դեմ, 0 անվավեր քվեաթերթ/ Հեռուստալրագրության ամբիոնի դասախոս, ՀՀ վաստակավոր գործիչ Հովիկ Վաչագանի Հովհաննիսյանին <<Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն>> մասնագիտության գծով շնորհել

դոցենտի գիտական կոչում՝ ըստ կոչումների կարգի 5(դ) կետի, և դիմել ՀՀ ԲՈՀ այդ որոշումը հաստատելու խնդրանքով:

Լսեցին - Համալսարանում գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքների կազմակերպման գործընթացի մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Սրբուհի Գևորգյան):

Պրոֆեսոր Գևորգյանը ներկայացրեց ֆակուլտետներում և ամբիոններում գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների իրականացման ուղղությունները և հավելեց, որ համալսարանում իրականացվում են հիմնարար, տեսական, կիրառական, փորձարարական գիտական և գիտամեթոդական հետազոտություններ մանկավարժության, հոգեբանության, դպրոցական առարկաների դասավանդման մեթոդիկաների, մշակութաբանության, ինֆորմացիոն տեխնոլոգիաների, բնագիտության այլ բնագավառներում՝ բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերին համապատասխան: Նա անդրադարձավ նաև գիտական մրցույթներում դասախոսներին, իսկ ձեռնարկներում՝ ուսանողներին ընդգրկելու ուղղությամբ տարված աշխատանքներին, ինչպես նաև դրանց արդյունքները մասնագիտական լայն հասարակությանը ներկայացնելու ձևերին: 738 հոդված, որից 225-ը ցիտվող (SCOPUS, РИИЦ... և այլն) պարբերականներում, 11 մենագրություն, 108 ձեռնարկ, 61 գիրք. 2017 թվականին համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, գիտաշխատողների, ասպիրանտների և հայցորդների հրապարակումներն են, որոնց թիվն էականորեն աճել է նախորդ տարիների համեմատ,- իր ելույում նշեց պրոռեկտորը: Ակնհայտորեն ավելացել է նաև պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը միջազգային գիտաժողովներին:

Ռեկտոր պարոն Միրզախանյանը մասնավորապես հավելեց, որ այդ աշխատանքներում քիչ է մագիստրոսների մասնակցությունը: Նա առաջարկեց որոշման նախագծում ավելացնել կետ՝ մագիստրոսների մասնակցությունը գիտական հրատարակչական գործընթացներում խրախուսել համար:

3. Որոշեցին -

➤ Համալսարանում գիտահետազոտական և հրատարակչական աշխատանքների

կազմակերպման գործընթացը համարել բավարար,

➤ բարձրացնել գիտական գործունեության արդյունավետությունը՝ շարունակելով մասնակցել ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված բազային և թեմատիկ ֆինանսավորվող ծրագրերի մրցույթներին,

➤ խրախուսել միջազգային գիտական կառույցների հետ իրականացվող ծրագրերը,

➤ նպաստել վերոնշյալ ծրագրերում մագիստրոսների, ասպիրանտների և հայցորդների գործուն մասնակցությանը,

➤ նպաստել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից գիտական հոդվածների հրատարակմանը միջազգային Scopus, Web of Science/ Web of Knowledge, British library և այլ հեղինակավոր պարբերականներում,

➤ Խրախուսել մագիստրոսների մասնակցությունը գիտական հրատարակչական գործընթացներում:

Հսեղին – Տեղեկատվական տեխնոլոգիաները համալսարանում:(Զեկ. Արա Երեմյան):

Իր զեկույցում պարոն Երեմյանը նշեց, որ Համալսարանում ծրագրային և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, կիրառումն ու դրանց սպասարկումը շարունակական բնույթ ունեն: Պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ և ներդրվում ժամանակակից պայմաններին բավարարող արդիական տեխնոլոգիաներ:

Գիտական խորհրդի անդամներն առանձնակի կարևորեցին նաև Google Classroom ինտերակտիվ ուսուցման համակարգի վերաբերյալ հարցը՝ դրա հետ կապված իրենց մտահոգություններն ու նկատառումները:

Պարոն Միրզախանյանը կարևորեց այդ համակարգի առավելությունները: Համակարգի ճիշտ կիրառումը կհեշտացնի ուսանողի գործը և արդյունավետ կդարձնի դասախոսի աշխատանքը: Նա ասաց , որ համակարգն ունի կատարելագործման անհրաժեշտություն:

Նա հորդորեց վերանայել համակարգում գնահատման, հանձնարարականների վերաբերյալ հարցերը, անցկացնել աշխատանքային հանդիպումներ՝ նոր ուսումնական տարում նորացված ու կատարելագործված համակարգ ունենալու համար:

4. Որոշեցին – Համալսարանում տեղեկատվական տեխնոլոգիաների մասին հաղորդումը ընդունելի գիտություն:

Ընթացիկ հարցեր.

Հսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի ասպիրանտ Մարիամ Հովակիմյանի թեկնածուական ատենախոսության թեման, Մանկավարժության տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ Մարիա Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեման, Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի հայցորդ Արա Իսպիրյանի թեկնածուական ատենախոսության թեման, հաղորդումը Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ Լուսինե Ասատրյանի թեկնածուական ատենախոսության թեման, հաղորդումը Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս մանկ. գիտ. թեկնածու Ռուզաննա Մուրադյանի դոկտորական ատենախոսության թեման հաստատելու մասին:

5. Որոշեցին – Հաստատել.

- Մարիամ Հովակիմյանի <<Զանգվածային լրատվամիջոցները որպես անձի սոցիալ-մշակութային կոմպետենցիայի ձևավորման միջոց>> /ԺԳ.00.02.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր Լեմա Ներսիսյան):
- Մարիա Գևորգյանի <<Շախմատի ուսուցման միջոցներն ու ձևերը հանրակրթական դպրոցում>> /ԺԳ.00.01.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր Լաուրա Ասատրյան):
- Արա Իսպիրյանի << Մանկավարժական կադրերի շարունակական կրթության հիմնախնդիրները>> /ԺԳ.00.01.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության թեման (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ.դոկտոր Մանուկ Մկրտչյան):
- Լուսինե Ասատրյանի <<Ուսումնական լեզվական թղթապանակի կիրառումը անգլերենի ապագա ուսուցիչների մասնագիտական դասընթացում>>

/ԺԳ.00.02.թվանիշով/ թեկնածուական ատենախոսության (Գիտական ղեկավար՝ մանկ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր Մելանյա Աստվածատրյան):

- Ռուզաննա Մուրադյանի <<Անձի քաղաքաիրավական մշակույթի ձևավորման հիմնախնդիրները պետություն-քաղաքացիական հասարակություն համագործակցության համատեքստում>> /ԺԳ.00.01.թվանիշով/ դոկտորական ատենախոսության թեման:

Լսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը Ն/Դ մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Արևիկ Խուզեյանի <<Ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացումը համատեղ գործունեության ընթացքում>> վերնագրով թեկնածուական ատենախոսության ԺԳ.00.01 թվանիշը փոխելու մասին:

6. **Որոշեցին** – Արևիկ Խուզեյանի <<Ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացումը համատեղ գործունեության ընթացքում>> վերնագրով թեկնածուական ատենախոսության ԺԳ.00.01 թվանիշը փոխել ԺԳ.00.02 թվանիշով:

Լսեցին - Գիտամեթոդական հարցերի գծով հանձնաժողովի նախագահ Սրբուհի Գևորգյանի հաղորդումը Մանկության հիմնախնդիրներն ուսումնասիրող լաբորատորիայի <<Մանկավարժական առողջագիտությունը տարրական դպրոցում>> ուսումնամեթոդական ձեռնարկը, Արմեն Աջամոլյանի <<Աշխարհագրության ուսուցման կազմակերպումը տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ>> ուսումնամեթոդական ձեռնարկը, Լաուրա Ասատրյանի, Մարգարիտա Ասատրյանի, Նաիրա Սաֆարյանի <<Դպրոցի կառավարման հիմունքներ>> ուսումնամեթոդական ձեռնարկը և <<Հայ մանկավարժության երախտավորները ժամանակակից մանկավարժական մոտեցումների համաբնագրում>> գիտաժողովի նյութերը հրատարակության երաշխավորելու մասին:

7. **Որոշեցին** - Վերոնշյալ աշխատանքները և գիտաժողովի նյութերը երաշխավորել հրատարակության:

Լսեցին - Սկզբնական ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի <<Տարրական մանկավարժություն և մեթոդիկա>> մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Անահիտ Հովիկի Հովակիմյանին <<Գուրգեն Էդիլյան>> անվանական կրթաթոշակի

ներկայացնելու մասին: (Ձեկ՝ Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյան):

8. Որոշեցին - Սկզբնական ֆակուլտետի մագիստրոսի կրթական ծրագրի <<Տարրական մանկավարժություն և մեթոդիկա>> մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Անահիտ Հովիկի Հովակիմյանին նշանակել <<Գուրգեն Էդիլյան>> անվանական կրթաթոշակ:

Լսեցին - Բանասիրական ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Պապեյանին Համազգային հայ կրթական և մշակութային միության սահմանած <<Հակոբ Կարապենց>> միանվագ կրթաթոշակի ներկայացնելու մասին: (Ձեկ՝ Բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյան):

9. Որոշեցին - Բանասիրական ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Պապեյանին ներկայացնել Համազգային հայ կրթական և մշակութային միության սահմանած <<Հակոբ Կարապենց>> միանվագ կրթաթոշակի:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՄԱՐԻԱՄ ԻՄՊԻՐՅԱՆ